ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 06-Ա

ՀՐԱՆՏ ԵՎ ԽԱՉԱՏՈՒՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆՆԵՐԻՆ ՈՒ ՍԻՐՎԱՐԴ ԽԵԴՈՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՄԲ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՍԱՀՄԱՆԱԿԻՑ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի պահանջներով,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման պահանջները և ընդառաջելով Խաչատուր Մարտիրոսյանի և Սիրվարդ Խեդոյանի խնդրանքներին /մտից մատյանի՝13.01.2021թ. թիվ 16/. **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Արարատի մարզ Մասիս քաղաք 1-ին թաղամաս 6-րդ փողոց թիվ 45/1 հասցեում 0,0205 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածքը /ծածկագիր՝ 03-003-0717-0010/, որը սահմանակից է Հրանտ և Խաչատուր Մարտիրոսյաններին, Սիրվարդ Խեդոյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տնով ծանրաբեռնված /ծածկագիր՝ 03-003-010-001/ հողամասին և ընդլայնվող հողամաս հնարավոր է մուտք գործել բացառապես օտարվող հողամասից և որը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում, ընդլայլնման նպատակով

ուղղակի վաճառքով օտարել Հրանտ Մարտիրոսյանին, Խաչատուր Մարտիրոսյանին ու Սիրվարդ Խեդոյանին:

2.Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 910569 / ինը հարյուր տաս հազար հինգ հարյուր վաթսունինը / ՀՀ դրամ, 1 քմ-ի արժեքը 4441.8 /չորս հազար չորս հարյուր քառասունմեկ ամբողջ ութ/ ՀՀ դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՎԱԴՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԷԴՄՈՆԴ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

Համայնքի ղեկավար՝ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ